ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 367-Ա

«04» հուլիսի 2018թ.Ք. Էջմիածին

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով նյութապես աջակցելու արցախյան ազատամարտում զոհված էջմիածին քաղաքի թվով 8 ազատամարտիկների ընտանիքներին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Արցախյան ազատամարտում զոհված էջմիածին քաղաքի թվով 8 ազատամարտիկների ընտանիքներին էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված սոցիալական ֆոնդի միջոցներից հատկացնել 20000-ական դրամ ֆինանսական աջակցություն, Արծրունի Ֆահրադյանի միջոցով ստանալ 160.0 հազ. դրամ և հանձնել համաձայն կից ներկայացվող ցուցակի:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 368

_____ 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 19.06.2018Թ. ԹԻՎ 358 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 19.06.2018թ. «Շինության գործառնական նշանակությունը և օգտագործման նպատակը, հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու և բաժանելու մասին» թիվ 358 որոշման մեջ կատարել փոփոխություն.
. Որոշման երկրորդ կետի «Վերը նշված շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 128քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրի» բառերից հետո «հասարակական կառուցապատման» բառերը փոփոխել «բնակելի կառուցապատման» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 369

04 հոկտեմբեր 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 19.06.2018Թ. ԹԻՎ 353 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 19.06.2018թ. «Բնակելի տան բաժանման և հասցեավորման մասին» թիվ 353 որոշման մեջ կատարել փոփոխություն.

. Որոշման առաջին կետի «Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի թիվ 92/3 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 288.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին, Վազգեն Առաջին փողոց թիվ 92/3», բառերից հետո «91.0քմ մակերեսով» բառերը փոխել «81.0 քմ մակերեսով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ